ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Պ-1376-26.06.2026-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 2.1-ին մասով.

«2.1. Եթե մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի պաշտոնները միաժամանակ թափուր են և հանձնաժողովը Կանոնակարգի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով չի նշանակել հանձնաժողովի նախագահին փոխարինող, ապա հանձնաժողովի արտահերթ նիստն հրավիրվում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսից ավելիի նախաձեռնությամբ: Արտահերթ նիստը գումարելու նախաձեռնությամբ առաջարկվում է նաև հանձնաժողովի արտահերթ նիստը նախագահող հանձնաժողովի անդամի թեկնածությունը: Արտահերթ նիստը հրավիրում և նախագահում է նախաձեռնությամբ առաջարկված հանձնաժողովի անդամը: Արտահերթ նիստն անցկացվում է հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու կամ հանձնաժողովի նախագահին փոխարինող նշանակելու օրակարգով և նախաձեռնողների սահմանած ժամկետում:»:

Հոդված 2. Օրենքի 33-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 7.1-ին և 7.2-րդ մասերով.

«7. 1. Եթե Ազգային ժողովի նախագահի տեղակալի թափուր պաշտոնում թեկնածու չի առաջադրվում կամ առաջադրված նույն թեկնածուն երեք անգամ չի ընտրվում, ապա այդ տեղակալի ընտրության հարցի քննարկումն համարվում է ավարտված և քննարկվում է Ազգային ժողովի նախագահի հաջորդ տեղակալի ընտրության հարցը: Եթե ընտրվել է Ազգային ժողովի նախագահի առնվազն մեկ տեղակալ և Ազգային ժողովի նախագահի մյուս տեղակալների ընտրության հարցերի քննարկումն ավարտվել է, ապա Ազգային ժողովի երեք տեղակալների ընտրությունների հարցի քննարկումն Ազգային ժողովի առաջին նստաշրջանում համարվում է ավարտված և քննարկվում է օրակարգային հաջորդ հարցը:

7.2. Եթե իրավասու խմբակցությունը մշտական հանձնաժողովի նախագահի՝ իրեն վերապահված թափուր պաշտոնում թեկնածու չի առաջադրում կամ առաջադրված նույն թեկնածուն երեք անգամ չի ընտրվում, ապա այդ հանձնաժողովի նախագահի ընտրության հարցի քննարկումն համարվում է ավարտված և քննարկվում է հաջորդ մշտական հանձնաժողովի նախագահի ընտրության հարցը: Եթե բոլոր մշտական հանձնաժողովների ընտրության հարցերի քննարկումն ավարտվել է, ապա Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահների ընտրությունների հարցի քննարկումն Ազգային ժողովի առաջին նստաշրջանում համարվում է ավարտված և Ազգային ժողովի ամենօրյա նիստերն ավարտվում են:»:

Հոդված 3. Օրենքի 138-րդ հոդվածի՝

1)5-րդ մասը ուժը կորցրած ճանաչել,

2)12-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ~~ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ~~ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 14-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 2.1-ին մասով.

«2.1. Եթե մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի պաշտոնները միաժամանակ թափուր են և հանձնաժողովը Կանոնակարգի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով չի նշանակել հանձնաժողովի նախագահին փոխարինող, ապա հանձնաժողովի արտահերթ նիստն հրավիրվում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսից ավելիի նախաձեռնությամբ: Արտահերթ նիստը գումարելու նախաձեռնությամբ առաջարկվում է նաև հանձնաժողովի արտահերթ նիստը նախագահող հանձնաժողովի անդամի թեկնածությունը: Արտահերթ նիստը հրավիրում և նախագահում է նախաձեռնությամբ առաջարկված հանձնաժողովի անդամը: Արտահերթ նիստն անցկացվում է հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու կամ հանձնաժողովի նախագահին փոխարինող նշանակելու օրակարգով և նախաձեռնողների սահմանած ժամկետում:»:

Հոդված 2.Օրենքի 33-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 7.1-ին և 7.2-րդ մասերով.

«7. 1. Եթե Ազգային ժողովի նախագահի տեղակալի թափուր պաշտոնում թեկնածու չի առաջադրվում կամ առաջադրված նույն թեկնածուն երեք անգամ չի ընտրվում, ապա այդ տեղակալի ընտրության հարցի քննարկումն համարվում է ավարտված և քննարկվում է Ազգային ժողովի նախագահի հաջորդ տեղակալի ընտրության հարցը: Եթե ընտրվել է Ազգային ժողովի նախագահի առնվազն մեկ տեղակալ և Ազգային ժողովի նախագահի մյուս տեղակալների ընտրության հարցերի քննարկումն ավարտվել է, ապա Ազգային ժողովի երեք տեղակալների ընտրությունների հարցի քննարկումն Ազգային ժողովի առաջին նստաշրջանում համարվում է ավարտված և քննարկվում է օրակարգային հաջորդ հարցը:

7.2. Եթե իրավասու խմբակցությունը մշտական հանձնաժողովի նախագահի՝ իրեն վերապահված թափուր պաշտոնում թեկնածու չի առաջադրում կամ առաջադրված նույն թեկնածուն երեք անգամ չի ընտրվում, ապա այդ հանձնաժողովի նախագահի ընտրության հարցի քննարկումն համարվում է ավարտված և քննարկվում է հաջորդ մշտական հանձնաժողովի նախագահի ընտրության հարցը: Եթե բոլոր մշտական հանձնաժողովների ընտրության հարցերի քննարկումն ավարտվել է, ապա Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահների ընտրությունների հարցի քննարկումն Ազգային ժողովի առաջին նստաշրջանում համարվում է ավարտված և Ազգային ժողովի ամենօրյա նիստերն ավարտվում են:»:

~~33-րդ հոդվածի՝~~

~~1) 6-րդ մասի 3-րդ կետից հանել «երեք» բառը.~~

~~2) 7-րդ մասից հանել «Մինչև մշտական հանձնաժողովների նախագահների ընտրությունների հարցի քննարկումն ավարտվելը տեղի են ունենում ամենօրյա նիստեր:» նախադասությունը:~~

~~3) 7-րդ մասում «կարգով:» բառից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններ.~~

~~« Եթե խմբակցությունը հարցի քննարկման սկզբից երկու օրվա ընթացքում չի իրականացնում թեկնածու առաջադրելու իր պարտադիր լիազորությունը, ապա Ազգային ժողովն անցնում է օրակարգով նախատեսված հաջորդ հարցի քննարկմանը: Տվյալ պաշտոնում իրավասու խմբակցությունն առաջադրում է թեկնածու՝ տասնօրյա ժամկետում»:~~

~~***Հոդված 2.*** Օրենքի 137-րդ հոդվածի 3-րդ մասում «թվից» բառից հետո լրացնել նոր նախադասություն.~~

~~« Եթե առաջին նստաշրջանում խմբակցությունը չի իրականացնում թեկնածու առաջադրելու իր պարտադիր լիազորությունը, ապա Ազգային ժողովն անցնում է օրակարգով նախատեսված հաջորդ հարցի քննարկմանը: Տվյալ պաշտոնում իրավասու խմբակցությունն առաջադրում է թեկնածու՝ տասնօրյա ժամկետում:»:~~

Հոդված 3. Օրենքի 138-րդ հոդվածի՝

1)5-րդ մասը ճանաչել ուժը կորցրած,
2)12-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրվանից:~~Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:~~

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ(Պ-1376-26.06.2026-ՊԻ-011/1)

ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
1	ՀԵՂԻՆԱԿ	Նախագիծ	Լրամշակված նախագծի խմբագրված տարբերակում տեսանելի ձևով՝ ջնջված կամ լրացված ներկայացած և առաջին ընթերցմամբ ընդունված նախագծում կատարված բոլոր փոփոխությունները և լրացումները (տես՝ նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանք):	Ընդունվել է:	Ընդունվել է: